Ի ՄԿԱՆՈՒՆՍ ԳԵՏՈՑ

— ՆՈՒԱԳ —

Ըզհողմաշարժ ալիս ըզվաղ և զպրզպրջակ,
Խոխոջ կարկաջ սոյր և շրրջան սաստիկ արագ,
Զալս և զյորձանս, փրրփուր հառաչ և ըզկոհակ,
Ծովածաւալ ըզտարածմունս խորշկէն ծակ ծակ,

Հեզ ծածանմունս, ըզմութ և զլոյսըս կապուտակ,
Ահեղաձայն խիտ ելևէջ մինչ 'ի յատակ,
Ըզկաց և ճնաց, ըզդանդաղանըս ծիծաղակ,
Կընճիռն յոլով, նրկարս ըստուերս իբր ընդ ապակ,

Մերթ երևել և մերթ ծածկիլ, մերթ ոռոգել
Մերթ զովանալ և մերթ պաղիլ գիծգիծ թելթել,
Մերթ ընդ խոխոմս յըստակ զըտիլ հեկեկաձայն.

Մերթ ամբառնալ կոխել զափունս ամբարտաւան,
Մերթ ըզնաւակ, սայլ բեռնաբարձ աշխոյժ տանել,
Ո՛վ պերճաբան Մուսայդ, տուր քաջ ինձ վիպագրել։

Հ. Ար. ծ.

ԳՈՒԼԻԷԼՄՈՍ Ա
ԹԱԳԱՒՈՐ ԲՐՈՒՍԻՈՑ

Գուլիէլմոս թագաւորը Փրեդերիկոս Գուլիէլմոս Դին եղբայրը ու յաջորդը, և Փրեդերիկոս Գին որդին, ծնաւ 1797ին մարտի 22։ Մէկէն զինուորական ծառայութիւնը մտաւ և 1813 ու 1815 թուականաց մէջ Նաբոլէոն առաջնոյն դէմ եղած պատերազմաց մասնակից եղաւ։ Յամին 1848 Բոմերանիոյ կուսակալ ընտրուեցաւ, բայց խռովութիւնը պատճառաւ ստիպուեցաւ Անդղիա փախչիլ, ուր քանի մը ամիս պանդխտելէն ետև, նոյն տարւոյն մայիս ամսոյն մէջ Սահմանադիր ժողովոյն նուիրակ ընտրուելով, Պէրլին դառնալու հրաման ընդունեցաւ։

Յամին 1849 երբ Բրուսիան Պատէնի խռովարարները նուաճելու համար զինդեր խաւրելու պարտաւորուեցաւ, անոնց հրամանատարութիւնը իրեն յանձնեց, որ քանի մը շաբթուան մէջ հանդարտեց երկիրը, և հոկտեմբեր ամսոյն մէջ Քոպլէնց գնաց Հռենոսեան դաւառաց զինուորական կուսակալի պաշտօնով։ 1854 տարւոյն հաղարապետ հետեւակազօրուն, և Մայենցա քաղքին դաշնաւոր բերդից առաջնորդ անուանուեցաւ։

1858ին տէրութեան կառավարութիւնը իրեն անցաւ իր թագաւոր եղբօրը հիւանդութեան պատճառաւ, որուն և յաջորդեց 1861ին Գուլիէլմոս Ա. անուամբ, և պահպանելով թագաւորական իրաւունքները ժառանգեց։